ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի
ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի 2023 թվականի մարտի 7-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝

1. Գրիգոր Հայրապետյանին գումար վերադարձնելու մասին:
2. Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի /ակտիվների և պարտավորությունների/ ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Ծաղկաձոր համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
4. Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի գործունեությունը դադարեցնելու մասին:
5. Համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը քննարկելու մասին:
6. Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին
7. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:
8. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:
9. Համայնքային սեփականություն համարվող հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:
10. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:
11. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼԵՅԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ